ՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ[1]

Ն. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կոպտական (ղպտի) եկեղեցու և ժողովրդի շուրջը մեծ հետաքրքրություն առաջացավ XVIII դարի վերջերից սկսած, հատկապես Նապոլեոնի Եգիպտոս կատարած հայտնի արշավանքից հետո. եվրոպացի և տեղացի պատմաբաններն ու արվեստագետները սկսեցին հրատարակել բազմաթիվ դրքեր (ֆրանսերեն, անգլերեն և արաբերեն) հիշյալ ժողովրդի և եկեղեցու մասին։

XIX դարի վերջերին անգլիացի պատմաբան Ալֆրեդ Բատլերը Օքսֆորդում լույս ընծայած «Եգիպտոսի կոպտական հին եկեղեցիները» վերնագրով երկու հատորանոց իր դրքում[2] բավական մանրամասն խոսում է այդ եկեղեցիներում գտնվող սրբանկարների մասին, առանց, սակայն, նրանց հեղինակի անունը տալու։

Ղպտի քահանա Շենուդա Հաննան իր գրքում[3] նույնպես տալիս է Հովհաննեսի մի քանի նկարների լուսանկարը, համառոտ կերպով խոսում է այդ նկարների մասին, սակայն չի տալիս նկարչի անունը, պարզապես ցույց չտալու համար, որ դրանց հեղինակը եղել է օտարական։

Կոպտական թանգարանի հիմնադիր, նրա առաջին դիրեկտոր, կոպտական արվեստի գիտակ Մարկոս Սիմայկա փաշան առաջիններից մեկը եղավ, որ 30-ական թթ. Կահիրեի Կոպտական թանգարանի և եկեղեցիների մասին իր հրատարակած արաբերեն երկու հատորանոց կատալոգում[4] և ապա ֆրանսերեն հատորում[5] գրեց և հիշատակեց Հովհաննես նկարչի մասին, նշելով նրա ազգային պատկանելությունը։

Ապա անգլիացի զինվորական երկու օդաչուներ՝ Քաութրա Մուլոքը և Մարտին Տելզ Լանգդոնը այցելելով Եգիպտոս, հին Կահիրեի կոպտական եկեղեցիներում տեսնում են հայազգի Հովհաննեսի և նրա ղպտի ընկերոջ՝ Բրրահիմի սրբանկարները, վերցնում են լուսանկարներ և Լոն-

---

[1] 1948 թ. ամռանը, երբ որոնումներ էինք անում հին Կահիրեի Կոպտական թանգարանում, մեր ուշադրությունը գրավեցին մի քանի գեղեցիկ սրբանկարներ, որոնց ոճին հար և նման բազմաթիվ նկարներ հետագայում տեսանք նաև նույն թանգարանի անմիջական մոտակայքում գտնվող մի քանի կոպտական եկեղեցիներում։ Մեր ուրախությունը մեծ եղավ հատկապես, երբ նկատեցինք, որ այդ սրբանկարներից շատերի տակ կա նկարչի կողմից գրված հիշատակարան։ Արվեստագետն իր նկարած բազմաթիվ գործերի վրա արաբերեն հստակ տեղեկություններ է թողել իր անվան, ազգային պատկանելության, ինչպես նաև սրբանկարների թվականի, բովանդակության, պատվիրատուների անվան մասին և այլն։

Հայազգի նկարիչ Հովհաննեսը եղել է բազմարդյուն և տաղանդավոր մի արվեստագետ, որի գործերից լավ վիճակում մինչև այսօր պահպանվել են մի քանի հարյուր սրբանկարներ։ Դրանցից ավելի քան հարյուրը մենք անձամբ տեսել ենք վերոհիշյալ եկեղեցիներում, պատերից կախված։ Այդ նկարների մեծ մասի լուսանկարները, չափագրումները և այլ տեղեկություններ հայրենիք վերադառնալիս բերել ենք մեզ հետ։

[2] Alfred J. Butler, The Ancient Coptic Churches of Egypt. in two volumes. Oxford, 1884. Vol. I, էջ 219, 221, 222, 223, 225 և հա.։

[3] Rev. Shenouda Hanna, The Coptic Church of El-Moallaka and others at Old Cairo. Cairo, Egypt, 1945. Fifth edition, էջ 71, 74, 75, 76.

[4] دليل المتحف القبطى وأهم الكنائس والاديرة الاثرية بقلم مرقس سميكه باشا. الجزء الاول. ١٩٣٠ (էջ 191) الجزء الثانى. ١٩٣٢ (էջ 4, 30...)

[5] Marcus H. Simaika Pacha, Guide Sommaire du Musée Copte et des Principales Eglises du Caire. Le Caire, 1937, էջ 47, 58, 60, 72, 76, 77, 81.

դոն վերադառնալով հրատարակում «Յուհաննայի և գրագիր Իբրահիմի սրբանկարները» գիրքը[6], Նրանք այս գրքում տալիս են սրբապատկերների մի փոքր գունավոր և 20 մեծածավալ սևով-սպիտակ լուսանկարները, 200-ամյա նկարների վրա հրավիրելով ընդհանրապես Եվրոպայի և մասնավորապես անգլիախոս աշխարհի արվեստագետների ուշադրությունը։

Հայտնի արաբագետ և Ալեքսանդրիայի ազգային դպրոցի տնօրեն Հակոբ Նալբանդյանը, որ հետագայում ներգաղթեց հայրենիք, վերոհիշյալ անգլիացիների հրատարակած գրքի առթիվ 1946 թ. հանդես եկավ մամուլում, Հովհաննես նկարչի մասին գրելով. «...XVIII դարուն ապրող Իբրահիմ Յուհաննայի ինքնատիպ նկարները արդիական արժեք մը կստանան հանկարծ»[7]։

Հայազգի արվեստագետներից առաջինը կահիրեաբնակ հայտնի նկարիչ Օննիկ Ավետիսյանն է, որ Բեյրութում Վահե Վահյանի հրատարակած «Անի» ամսագրի 1948 թ. նոյեմբեր ամսի համարում լույս ընծայեց մի հոդված Հովհաննես նկարչի անձի և նկարների արժեքի մասին։ Հետագայում, 1959 թ., Օ. Ավետիսյանը Հովհաննես նկարչի մասին գրեց «Հայ նկարիչներ և քանդակագործներ»[8] վերնագրով իր ծավալուն և շատ արժեքավոր աշխատության մեջ, որ լույս ընծայվեց Ֆրանսերեն։ Բազմաթիվ հայ արվեստագետների շարքում այս գիրքը միջազգային ասպարեզ հանեց նաև մեր հայրենակից Հովհաննեսի գործն ու կյանքը, թեպետև սեղմ և ամփոփ գծերով։ Հեղինակն այստեղ տվել է նաև Հովհաննեսի գործերից չորսի լուսանկարները։

Արվեստաբան Վահան Հարությունյանը, խոսելով Ավետիսյանի վերոհիշյալ աշխատության մասին, իր գրախոսականում գրում է. «...կան ուշագրավ ընդհանրացումներ, որոշ նորույթներ, դրանց թվում՝ XVIII դարի եգիպտահայ նկարիչ Հովհան[նա] էլ-Արմենիին վերաբերող հատվածը, նրա գործերի բազմագույն ու մենագույն վերատպությունները,—մի իսկական հայտնություն գաղութահայ կերպարվեստի պատմության մեջ»[9]։ Իսկ բանասեր Մանվել Բաբլոյանն իր հրատարակած գրքում անցողակի հիշում է Հովհաննես նկարչին, բերելով Ավետիսյանի գնահատականը նրա մասին[10]։

Նշված գրականության և անձամբ մեր հավաքած նյութերի հիման վրա մենք այս հոդվածում կաշխատենք ամբողջացնել Հովհաննեսի դիմագիծը, ի մի հավաքելով նրա մասին մեր ունեցած բոլոր տեղեկությունները։

Հովհաննեսը ծնվել, գործել և մահացել է XVIII դարում։ Իր նկարած բազմաթիվ սրբապատկերների տակ նա թողել է նկարների ստեղծման թվականը, որով հայտնի է դառնում իր աշխատանքային տարիների սահմանագիծը։ Ձեռքի տակ եղած տվյալներով պարզվում է, որ նրա ամենավաղ նկարները կրում են 1745 թ., իսկ ամենաուշ շրջանը կազմում է 1783 թ.։ Ուստի կարելի է ասել, որ նա 38 տարվա մի ժամանակաշրջան ստեղծագործել է հին Կահիրեի կոպտական միջնադարյան եկեղեցիներում և վանքերում, պատերը զարդարելով մեծ ու փոքր սրբանկարներով։ Միաժամանակ պետք է նշել, որ 38 տարին Հովհաննեսի գործունեության վերջնական թիվը չէ։ Հավանաբար նա ավելի երկար ստեղծագործած լինի։ Գուցե նկարել է այլ նկարներ ևս, որոնք այժմ կորած են։ Եվ, ի վերջո, պետք է խոստովանել, որ մենք հնարավորություն չունեցանք այցելելու Կահիրեի և հին Կահիրեի, հատկապես Վերին Եգիպտոսի կոպտական միջնադարյան բոլոր վանքերն ու եկեղեցիները, որպեսզի կարողանայինք կազմել Հովհաննեսի թողած ժառանգության լրիվ ցուցակը։

1745 թ. համարելով Հովհաննեսի ստեղծագործական աշխատանքի սկիզբը, կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ նա կլիներ շուրջ 28—30 տարեկան[11]։ Ուստի նա ծնված պետք է

---

[6] Cawthra Mulock, Marlin Telles Langdon, The Icons of Yuhanna and Ibrahim the Scribe, London, Nicholson and Watson, 1946.

[7] «Արաքս» շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1946, 2 նոյեմբերի, տե՛ս «Նկարչի մը մասին լուսաբանություն» հոդվածը։

[8] Onnig Avedissian, Peintres et sculpteurs arméniens. Le Caire, 1959, էջ 116—120։

[9] «Սովետական արվեստ», 1961, № 5, Երևան, էջ 47, տե՛ս «Հայ արվեստագետները մի «սեղանի» շուրջ» գրախոսականը։

[10] Մ. Բաբլոյան, Սփյուռքահայ մամուլի պատմությունից, «Անի», Երևան, 1965, էջ 179։

[11] Ձենք կարծում, որ ավելի երիտասարդ լիներ, քանի որ կոպտական եկեղեցին պետք է հրավիրած լիներ Հովհաննեսին, երբ նա արդեն հասուն և ճանաչված նկարիչ էր։ Այսպիսի տրամաբանություն են թողել մեր վրա նրա 1745, 1747 և 1748 թթ. սրբապատկերները։

լիներ մոտավորապես 1715—1717 թթ.։ Հովհաննեսը մահացած պետք է լինի 1783 թ. և կամ ավելի ուշ, ուրեմն նա ապրած պետք է լինի 68 կամ մի քանի տարի ավելի։

Նկարիչը բազմաթիվ պատկերների տակ իր անվան կողքին գրել է «հայազգի» բառը, որով ոչ մի կասկած չի մնում նրա ազգային պատկանելության մասին։ Դրանից բացի, բազմաթիվ նկարների տակ գրել է նաև «Երուսաղեմացի» բառը, որով պարզվում է, որ նա պետք է ծնված լինի Երուսաղեմում։ Սա այն քաղաքն է, որտեղ XVIII դարի սկզբներին գոյություն ունեին բազմաթիվ հայկական, հունական, ռուսական և այլ եկեղեցիներ, որոնց պատերը զարդարված էին անթիվ և անհամար սրբապատկերներով։ Հովհաննեսը, ծնվելով և մեծանալով Երուսաղեմում, հավանաբար դարավոր ս. Հակոբյան վանքի շրջակայքում, որտեղ գրեթե միշտ ապրում էին այդ գաղութի հայերը, մանկությունից տեսել է այդ հնադարյան քաղաքի բազմաթիվ վանքերի և եկեղեցիների պատերից կախված սրբապատկերները և կրել նրանց ազդեցությունը։

1745 թ. առաջ Հովհաննեսը արդեն զբաղված պետք է լիներ նկարչությամբ և մասնագիտացած եկեղեցական սրբանկարներ ստեղծելու մեջ։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա նա պետք է որոշ աշխատանքներ թողած լիներ Երուսաղեմի և կամ Պաղեստինի հայկական այլ վանքերում, և կամ Կահիրեի հայկական եկեղեցիներում։ Սակայն դժբախտաբար այդ մեզ անհայտ է մինչև օրս։

Բանասեր Ա. Գարտաշյանը գրում է. «Եկեղեցվո (Կահիրեի հայկական ս. Մինաս մատուռ—Ն. Մ.) խորանին ետին, պահարանին մեջ. փայտյա հին նկար մը. Պողոսի և Պետրոսի առաքելություն, հիշատակ է վանցի մհտ. Աննայի որդի Պետրոսի ի թվին ՌՃՂԶ (1747)»[12]։ Այս նկարի թվականը համապատասխանում է Հովհաննես Երուսաղեմացու Եգիպտոսում եղած ժամանակաշրջանին։ Անձամբ մենք որոնեցինք այս նկարը, որպեսզի կարողանայինք բաղդատել Հովհաննեսի նկարների հետ, սակայն դժբախտաբար չգտանք, ուստի չենք կարող ասել՝ Հովհաննեսի գործն է այն, թե ոչ. Ըստ երևույթին նկարի վրա նկարիչը չի թողել իր անունը։

Երուսաղեմի հայկական վանքում կան երկու այլ Հովհաննես նկարիչների սրբանկարները։ Մեկը հայտնի է Հովհաննես Ճգնավորյան անունով, ապրել է XIX դարում, ունի մի քանի նկարներ, որոնց թվականն է 1880-ը[13]։ Սա ցույց է տալիս, որ Հովհաննես Երուսաղեմացին և Հովհաննես Ճգնավորյանը նույն անձը չեն կարող լինել, որովհետև մեկ դարից ավելի մի ժամանակաշրջան է բաժանում երկուսին։ Մյուսը կոչվում է տիրացու Հովհաննես կամ Հովհաննես սարկավագ[14], որ ապրել է XVIII դարի առաջին կեսին և Երուսաղեմի հայկական վանքում թողել է բազմաթիվ մեծածավալ սրբանկարներ 1723—1727 թթ.։ Վերջինիս և Հովհաննես Երուսաղեմացու թվականները թեպետև մոտենում են իրարու, 1727-ից 1745 թթ., սակայն նկատի ունենալով. որ նրանց թողած ժառանգության մեջ ոճական ու կոմպոզիցիոն զգալի տարբերություն կա, կարծում ենք, որ սրանք տարբեր անձեր են։

Հարց է առաջանում՝ հոգևորական է եղել Հովհաննես նկարիչը, թե աշխարհական։ Այս մասին էլ ոչ մի տեղ ոչ մի ակնարկություն չկա։ Ակադեմիկոս Հ. Աճառյանը տալիս է մի երկար ցուցակ Հովհաննեսների (1397 հատ), սակայն դժբախտաբար չի հիշում մեր նկարչին[15]։ Գալով պատմիչ Հաննա Երուսաղեմացուն[16], որ եղել է հոգևորական և պատրիարքական փոխանորդ Երուսաղեմի Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր պատրիարքների ժամանակ, ապա նա մահացել է 1733 թ. և նկարչությամբ չի զբաղվել։ Սա գրել է Երուսաղեմի պատմությունը, հետևաբար նրան չենք կարող նույնացնել նկարչի հետ։ Մի փոքր կանգ առանք այս պատմիչի վրա, որովհետև խնդրո առարկա մեր նկարիչն իր բազմաթիվ սրբանկարների տակ ստորագրել է նաև «Հաննա Երուսաղեմացի»։

Մաղաքիա արք. Օրմանյանն իր «Ազգապատում»-ի մեջ ոչ մի հիշատակություն չունի Հովհաննես նկարչի մասին։

---

12 Արտաշես Հ. Գարտաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար. Պատմություն Եգիպտահայ եկեղեցիներու և գերեզմանատուններու, Կահիրե, 1943, էջ 25։

13 Մանրամասնությունները քաղել ենք Կյուրեղ վրդ. Գաբիկյանի Երուսաղեմից մեզ գրած 22 սեպտ. 1959 թ. նամակից։

14 «Հասկ» հայագիտական տարեգիրք, Գ տարի, 1957, Անթիլիաս, Լիբանան, տե՛ս Գարեգին կթղ. Հովսեփյանի «Տիրացու Հովհաննես, տաղանդավոր նկարիչ ԺԸ դարու առաջին քառորդում» հոդվածը, էջ 26—52։

15 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1946, էջ 537—705։

16 Նույն տեղում, էջ 49։

Մկրտիչ եպ. Աղավնունին իր աշխատության մեջ երկու տողով հիշատակում է մի անձնավորություն «Հովհաննես վարդապետ Եգիպտոսի»[17] անվան տակ, որ ծնվել է 1731 թ. և վախճանվել 1795-ին, եղել է Երուսաղեմի հայոց վանքի միաբանության անդամ և պաշտոնավարել Եգիպտոսի հայ եկեղեցում։ Սակայն նկատի առնելով մեր Հովհաննեսի նկարչական գործունեության ժամանակաշրջանը Եգիպտոսում (1745—1783 թթ.), պարզ տեսնում ենք, որ սրանք երկուսը տարբեր անձեր են, քանի որ 1731 թ. ծնվածը չէր կարող 1745 թ. այսինքն 14 տարեկան հասակում, վարպետորեն սրբապատկերներ նկարել Եգիպտոսում։

Մեր կարծիքով Երուսաղեմացի Հովհաննես հայազգի նկարիչը եղել է աշխարհական, այլապես մեզ հասած իր բազմաթիվ նկարներից մեկնումեկում գոնե պետք է մի փոքր հիշատակություն թողած լիներ իր հոգևորական լինելու մասին։ Սակայն այդպիսին չկա բոլորովին։ Մի հանդամանք ևս. եթե նա քահանա կամ վարդապետ եղած լիներ, ապա չպիտի կարողանար այդքան շատ թվով նկարներ ժառանգություն թողնել եկող սերունդներին, քանի որ ի պաշտոնե պետք է զբաղված լիներ վարչական և կամ հոգևորական այլ գործերով։ Մի վերջին ենթադրություն ևս. հայ եկեղեցու հոգևորականը երդվում է ծառայել իր ժողովրդին, ազգային եկեղեցուն, և չէր կարող թողնել իր եկեղեցին, այն էլ չորս տասնամյակ շարունակ, և ծառայել մի օտար միջավայրում, որպիսին է այս դեպքում ղպտի եկեղեցին, թեև վերջինս միշտ սերտ կապի մեջ է եղել հայ եկեղեցու հետ։

1778 թ.

1779—80 թթ.

Նկարիչ Հովհաննես Երուսաղեմացին զանազան արվեստագետների և բանասերների կողմից ներկայացվում է տարբեր անուններով և ձևերով։

Ղպտի Մարկոս Սիմայկա փաշան Կոպտական թանգարանի արաբերեն կատալոգի Ա հատորում (1930 թ.) անունը տալիս է այսպես حنا الارمنى القدس Հաննա էլ-Արմանի էլ-Քուտսի, այսինքն՝ Հաննա հայազգի Երուսաղեմացի (էջ 191), իսկ նույնի Բ հատորում (1932 թ.) տալիս է պարզապես حنـــا الارمنى Հաննա էլ-Արմանի, այսինքն՝ Հաննա հայազգի (էջ 4

17 Մ կ ր տ ի չ Ե պ. Ա ղ ա վ ն ո ւ ն ի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 378։

և 30)։ Նույն անձնավորությունն այդ նույն կատալոգի ֆրանսերեն թարգմանության մեջ (1937 թ.) արաբերեն «Հաննա» անունը թարգմանելով ֆրանսերենի բազմաթիվ էջերում (58, 72, 73, 76, 77, 81), տալիս է Jean l' Arménien ձևով, այսինքն Հովհաննես հայազգի։

Անգլիացիներ Մուլոքը և Լանգդոնը 1946 թ. լույս ընծայած իրենց գրքում, որ միջազգային համբավի արժանացրեց Հովհաննեսի գործերը, նկարչի անունը տալիս են այսպես՝ Yuhanna the Armenian of Jerusalem—Յուհաննա հայազգի Երուսաղեմացի։

Հակոբ Նալբանդյանն ընկնելով թյուրիմացության մեջ գրում է հետևյալը. «...Ավելորդ չեմ նկատեր ճշտել թե՝ հիշատակված երկու անունները (խոսքը Իբրահիմի և Հովհաննեսի մասին է— Ն. Մ.) մեկ անձ են։ Նկարիչը կկոչվի իրականին մեջ՝ Իբրահիմ Յուհաննա էլ Արմանի էլ Կուտցի. հայտնի է ուրեմն, որ ան ազգով հայ էր և Երուսաղեմացի»[18]։ Հանգուցյալ բանասերը թյուրիմացարար շփոթության մեջ ընկնելով կարծել է, թե այդ երկու նկարիչները նույն անձնավորությունն են, և երկուսի անունները միացնելով «Իբրահիմ Յուհաննա» է դարձրել։ Այս լուսաբանությունը գրելու ժամանակ լինելով Ալեքսանդրիայում, նա հնարավորություն չի ունեցել սրբանկարների ստորագրությունները կարդալու և անունները ստուգելու հին Կահիրեի զպտի եկեղեցիներում, որի պատճառով ակամա թույլ է տվել այդ սխալը։ Որևէ կասկած չի հարուցում, որ նրանք տարբեր անձեր են, որովհետև շատ նկարների տակ շատ պարզ կերպով գրված է այսպես. «Գործ Իբրահիմի և Յուհաննայի»։

Օ. Ավետիսյանն էլ «Անի» ամսագրում (1948 թ.) գրած հոդվածում նկարչի անունը նշում է «Յուհաննա էլ Էրմենի» ձևով, իսկ 1959 թ. լույս ընծայած «Հայ նկարիչներ և քանդակագործներ» վերնագրով իր ֆրանսերեն գրքում մի փոքր շեղվելով, հիշյալ անունը տալիս է այսպես՝ Yohanna El Arméni—Յոհաննա էլ Արմենի։

Այժմ տեսնենք, թե նկարիչն անձամբ ինչ ստորագրություն է թողել իր նկարների տակ։ Մեզ ծանոթ 300-ից ավելի սրբապատկերներից շատերի տակ նա իր անունը գրել է պարզապես حنا «Հաննա» ձևով, հատկապես վերջին տարիների իր գործերում, իսկ սկզբնական շրջանում ստորագրել է يوحنا —«Յուհաննա» ձևով, հատկապես այն բոլոր նկարների տակ, երբ Իբրահիմն ու Հովհաննեսը գործել են միասին։ Այդ բոլոր նկարների մեջ բացառություն է կազմում միայն մի սրբապատկեր[19], որի տակ նկարիչը թողել է իր անունն ու հայրանունը حنا كرابيت—«Հաննա Կարապիտ» ձևով՝ այսինքն «Հաննա Կարապետ»։ Այդ նկարը կատարված է 1782 թ., նկարչի ստեղծագործության վերջին շրջանում։

Օ. Ավետիսյանը «Անի» ամսագրում տպած իր հոդվածում նշում է, որ Կարապետը պետք է Հովհաննեսի հայրանունը լինի[20]։ Իսկ Մուլոքը և Լանգդոնը կարծում են, որ «Յուհաննա Կարապիտ» անունն արաբերեն համարժեքն է «Օհան Կարապետ և կամ Կարապետյան» հայերեն անուն-ազգանվան[21]։ Մեր կարծիքով ճիշտ է Օ. Ավետիսյանը և «Կարապետ»-ը պետք է նկարչի հայրանունը լինի, քանի որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Եգիպտոսում և արաբական այլ երկրներում սովորություն էր, որ որդին իր հայրանունով ճանաչվի, մի սովորություն, որ շարունակվում է մինչև այսօր։ Միայն թե անցյալում «Իբն», այսինքն որդի բառն էր ավելացվում։ Օրինակ՝ «Ահմեդ իբն Մուհամմեդ»—Մուհամեդի որդի Ահմեդ, իսկ այժմ օգտագործվում է առանց «Իբն» բառի։ Ուստի «Հաննա Կարապետ»-ը[22] պարզապես պետք է լինի նկարչի անուն-հայրանու-

---

18 «Արաքս» շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1946, 2 նոյեմբերի, տե՛ս «Նկարիչի մը մասին լուսաբանություն» հոդվածը։

19 Սրբապատկերը գտնվում է Կահիրեի Ֆում էլ-Խալիդ թաղամասում եղող կոպտական ս. Մինաս եկեղեցուն կպած և այդ եկեղեցու աջակողմում գտնվող Մարի Բանային (ս. Բեհնամ) նվիրված փոքրիկ մատուռում։ 1948 թ. մեր տեսած ժամանակ այդ նկարը (որ ներկայացնում է ս. Բեհնամը) դրված էր մատուռի դռան դիմացի պատի տակ դեպի ձախակողմը. գետնի վրա և պատին հենած։ Բավականին մեծ չափսերի նկար է այն։

20 «Անի» ամսագիր, Բեյրութ, Գ տարի, 1948, նոյեմբեր, № 1(25), էջ 37։

21 C. Mulock, M. T. Langdon, The Icons of Yuhanna and Ibrahim the Scribe, London, 1946, էջ 12։

22 Փաստեր կան ենթադրելու, որ հավանաբար Հովհաննեսի հայրն էլ՝ Կարապետը, իր ժամանակին սրբապատկերների վարպետ նկարիչ է եղել։ Վերջերս Հալեպի հայկական «Քառասուն մանկանց» XVI դարի աթոռանիստ եկեղեցում հայտնաբերվել է մի մեծ նկար, 4.75×2 մետր հսկայական ծավալով, որը պատկերացնում է «Ահեղ դատաստանը»։ Սրա հեղինակն է հայազգի

նը, ինչպես ընդունված էր արաբների մոտ։ Նկարչի անվան զանազան փոփոխակները (Հաննա, Յուհաննա, Յոհաննա, Օհան և այլն) այսպես մանրամասն քննելուց հետո, մենք կարծում ենք, որ նրան պետք է կոչել իր մկրտության հայկական անունով՝ Հովհաննես և նրա անունը մեր արվեստի պատմության մեջ պետք է մտնի Հովհաննես Երուսաղեմացի ձևով, այն մակդիրով, որ ինքը միշտ օգտագործել է, ցույց տալու համար իր ծննդավայրը։

Երուսաղեմացին մեծ ժառանգություն է թողել։ Այժմ մեզ ծանոթ են նրա բեղմնավոր ստեղծագործության արդյունքը հանդիսացող 324 մեծ ու փոքր սրբանկարներն ու որմնանկարները, որոնք գտնվում են ներկայիս Կահիրեի Կոպտական թանգարանում, զպտի երկու վանքերում և ութ եկեղեցիներում։ Ստորև տրվում է Հովհաննես Երուսաղեմացու, ինչպես նաև նրա ու Իբրահիմի համատեղ նկարած այն գործերի ցուցակը, որոնք կրում են ճշգրիտ թվական։

Ի դեպ պետք է նշել, որ Հովհաննեսը իր նկարների տակ շատ անգամ տալիս է զպտիների (Մարտիրոսաց—Շրհուդա կոչեցյալ, որ սկսվում է մ. թ. 284 թ., Դիոկղետիանոսի (284—305 թթ.) կայսրության առաջին տարուց), նաև Հիջրայի (622 թ.) թվականները, երբեմն էլ երկուսը միասին, և շատ քիչ անգամ տալիս է մեր թվականության տարեթիվը։ Մեզ ծանոթ այդ բոլոր նկարներից միայն երկուսի վրա թողել է հայոց թվականը, հայկական տառերով։ Մարտիրոսաց տարեթիվը համընկնում է մ. թ. տարեթվին, իսկ մահմեդական տարին 11 օր ավելի կարճ լինելով, Հիջրայի արաբական տարեթիվը չի համընկնում մեր տարեթվին և որոշ տարբերություն է տալիս։ Այդ պատճառով այն դեպքերում, երբ միայն արաբական տարեթիվն է տրված Հովհաննեսի

Հովհաննեսի՝ թվական կրող նկարների ցուցակն ըստ տարիների

Տարեթիվը	Ստորագրությունը կա	Ստորագրությունը չկա	Ընդհանուր դումարը
1759	1	—	1
1764	1	—	1
1768	—	1	1
1771	—	1	1
1772	8	1	9
1774	1	—	1
1775	—	1	1
1776	7	—	7
1776/7	18	—	18
1777	27	2	29
1778	2	7	9
1778/9	2	—	2
1779	—	9	9
1779/80	1	—	1
1780	25	14	39
1781/2	—	9	9
1782	1	3	4
1782/3	—	2	2
1783	—	1	1
1783/4	—	1	1
	94	52	146

մահտեսի Կարապետը, իսկ թվականը՝ 1708։ Նկարի վրա կան արաբերեն և հայերեն գրություններ (տե՛ս Վ. Գրիգորյանի հոդվածը «Սովետական Հայաստան» օրաթերթում, 11 հոկտ. 1966, «Հայերեն վիմագիր արձանագրություններ սիրիական անապատում» վերնագրով)։ Ամենայն հավանականությամբ Կարապետը 1708 թ. Հալեպի սույն նկարը վերջացնելուց հետո անցել է Երուսաղեմ, անշուշտ այնտեղ աշխատելու համար։ Իր որդու՝ Հովհաննեսի ծնունդը տեղի պետք է ունեցած լինի այդ քաղաքում, մոտավորապես 7—9 տարի հետո։ Տրամաբանորեն կապակցություն ենք գտնում Կարապետի և Հովհաննեսի միջև հետևյալ փաստերից ելնելով. Կարապետ անվան նույնությունը, թվականի մոտիկությունը, Կարապետի մահտեսի լինելը (որով պետք է անպայման Երուսաղեմ այցելած լիներ), նաև այդ նկարի վրա առկա արաբերեն արձանագրությունը և, վերջապես, Հալեպ և Երուսաղեմ քաղաքների մոտիկությունը։ Եթե հետագա փաստերը զան ապացուցելու մեր ենթադրության ճշտությունը, ապա պարզ կլինի, որ Հովհաննեսը իր արվեստը ձեռք է բերել հորից, մի բան, որ միջնադարում սովորական և ընդունված երևույթ էր։

նկարների տակ, երբեմն հնարավոր չի լինում մ. թ. ճշգրիտ տարին տալ, դրա համար ստիպված տալիս ենք երկու տարեթվերը, այսպես, օրինակ, Հիջրայի 1190—մ. թ. 1776/7 թթ.։

Իբրահիմի և Հովհաննեսի համատեղ նկարած, թվական կրող նկարների ցուցակն ըստ տարիների

Տարեթիվը	Անունները կան	Անունները չկան	Ընդհանուր դումարը
1745	2	1	3
1747	9	—	9
1748	2	—	2
1750	1	—	1
1752	11	—	11
1753	1	1	2
1755	1	—	1
	27	2	29

Պետք է ասել, որ վերևում տրված երկու ցուցակները թերի են, չեն ընդգրկում Հովհաննեսի և իր ընկերոջ հետ նկարած բոլոր նկարների շարքը։ Առաջին ցուցակում ցույց են տրված Հովհաննեսի թվական կրող 94 նկարները և այն 52 կտորները, որոնք անվիճելի կերպով Հովհաննեսի վրձնին են պատկանում, իսկ երկրորդ ցուցակում ցույց են տրված Իբրահիմի և Հովհաննեսի համատեղ ստորագրությամբ և թվական կրող 27 նկարները և այն 2 կտորները, որոնք մեր կարծիքով երկուսի միացյալ աշխատանքի արդյունք են։

Այս ցուցակներից հստակ կերպով պարզվում է, որ առաջին 11 տարիներում (1745—55 թթ.) երկու նկարիչները դպտի եկեղեցիները սրբանկարներով նկարազարդելու համար գործել են միասնաբար։ 1755 թ. հետո երկուսն էլ աշխատել են առանձին-առանձին։ Իբրահիմի մեզ հայտնի ամենաուշ կատարած սրբանկարը կրում է 1772 թ., որից հետո այլևս չենք հանդիպում նրա գործերին։ Ըստ երևույթին նա կամ մահացած պետք է լինի, կամ ասպարեզից քաշված՝ հիվանդության կամ ծերության պատճառով։

Հովհաննես Երուսաղեմացու ստորագրությամբ սրբանկարների հանդիպում ենք մինչև 1783/4 թթ.։ Այլ խոսքով Իբրահիմից հետո նա վրձինը վար չի դրել շուրջ 11—12 տարի ևս։ Հովհաննեսի ամենաուշ թվական կրող գործի վրա թեպետև ստորագրություն չի երևում սրբված և եղծված լինելու պատճառով, սակայն ոճից դատելով անվարան կարելի է ասել, որ Հովհաննեսի վրձնին է պատկանում։ Այս նկարը փոքր չափի է (25.5×41 սմ) և այժմ գտնվում է Կաս-

№	Եկեղեցի, վանք կամ թանգարան	Հանանա անվիճելի	Հանանա անստուգելի	Իբրահիմ և Հանանա անվիճելի	Իբրահիմ և Հանանա անստուգելի	Ընդհանուր դումարը
Ա	Ս. Կույսի եկեղեցի (էլ-Մոալլաքա)	43	23	—	1	67
Բ	Ս. Սարգսի » (Աբու-Սարգա)	15	27	1	—	43
Դ	Ս. Կույսի » (էլ-Ադրա, Կասրիյաա էր-Ռիհան)	8	20	—	—	28
Դ	Ս. Գևորգ վանք (Դեյր էր-Ռահրաթ)	—	1	—	—	1
Ե	Ս. Վառվառայի եկեղ. (Սիտա Բարբարա)	—	31	1	—	32
Զ	Ս. Մերկեռիոսի » (Աբուլ Սեյֆեյն)	23	54	21	—	98
Է	Ս. Մերկեռիոսի վանք (Դեյր Աբուլ Սեյֆեյն) . .	—	—	—	1	1
Ը	Ս. Կույսի եկեղեցի (էլ-Ադրա, Դամշիրիյա) . . .	6	9	3	—	18
Թ	Ս. Մինաս » (Ֆում էլ-Խալիգ)	10	4	3	1	18
Ժ	Ս. Կույսի » (Հարեթ էլ-Զուեյլայի)	—	1	—	—	1
ԺԱ	Կոպտական թանգարան (Հին Կահիրե)	—	14	3	—	17
		105	184	32	3	324

րիյատ էր-Ռիհանի կոպտական ս. Կույսի եկեղեցում։ Կրում է արաբական 1198 տարեթիվը, որ համապատասխանում է մ. թ. 1783/4 թթ.

Վերոհիշյալ ցուցակներից երևում է նաև, որ երկու նկարիչների համագործակցության տարիներին նրանք ամենաշատը նկարել են 1747 և 1752 թթ., առաջին տարին նկարելով 9 կտոր, իսկ երկրորդ տարին՝ 11։ Հովհաննեսի համար ամենաբեղմնավոր տարիները հանդիսացել են 1776/7 թթ. (54 կտոր) և 1780 թ. (39 կտոր)։

Հովհաննես Երուսաղեմացին իր շուրջ չորս տասնամյակ ստեղծագործական աշխատանքի ընթացքում թողել է մի քանի հարյուր մեծ ու փոքր սրբանկարների մի մեծ ժառանգություն, որից 324 կտոր այժմ պահվում է Կահիրեի կոպտական զանազան եկեղեցիներում, վանքերում և թանգարանում։ Վերևում տրված է այդ գործերի ցուցակն ըստ վայրի, նշելով Հովհաննեսի վրձնին պատկանող մեզ այժմ ծանոթ նկարների թիվը։

Մենք Եգիպտոսից բերել ենք այս նկարներից կարևորագույնների լավագրությունը, նկարագրությունը, տեղեկություններ թվականի, ստորագրության և այլ կարգի մանրամասնությունների մասին, ընդամենը 165 ձեռագիր էջ։ Մեզ մոտ են գտնվում այդ սրբանկարների ֆոտոպատճենները և դրանց սև ժապավենները, որոնք կհրատարակենք հետագայում, ինչպես նաև նկարների ընդհանուր ցուցակը։

Եթե ներկայումս Եգիպտոսում ապրող հայ բանասերներն ու արվեստագետները շարունակեն փնտրել Հովհաննեսի գործերը, ապա համոզված կարելի է ասել, որ կհայտնաբերեն նոր սրբանկարներ և գուցե նաև որմնանկարներ, ավելի մեծ թվով։

Մեր կարծիքով նրա աշխատանքներից այլ գործեր պետք է լինեն նաև՝

ա. Կահիրեի Հարեթ էլ-Զուելա թաղամասի էլ-Ադրայի (ս. Կույսի անվան նվիրված) կոպտական եկեղեցում, ինչպես նաև այդ շենքի երկրորդ հարկում գտնվող կույր մայրապետների վանքում։

բ. Հին Կահիրեի կոպտական թանգարանի պահեստում։

գ. Կահիրեի, ինչպես նաև Ստորին և Վերին Եգիպտոսների կոպտական միջնադարյան բազմաթիվ եկեղեցիներում և վանքերում, որոնց այցելելու առիթը չունեցանք մենք։

Հովհաննես Երուսաղեմացու ամբողջական գործերի մասին տեղեկություն ունենալու համար հարկավոր է նաև որոնումներ կատարել.

դ. Երուսաղեմի հայկական և կոպտական վանքերում և եկեղեցիներում։

ե. Մոսկվայի Տրետյակովյան, Լենինգրադի Էրմիտաժի և Բեռլինի պատկերասրահներում։ Փարիզի Լուվրի, Լոնդոնի Բրիտանական և Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարաններում գուցե նույնպես գտնվեն Հովհաննեսի վրձնի արգասիք հանդիսացող նմուշներից։

Անգլիացիներ Մուլոքը և Լանգդոնը իրենց հայտնի գրքում տալիս են կոպտական եկեղեցիների սրբանկարներից 20-ի մեծադիր լուսանկարները և յուրաքանչյուրի վրա գտնվող արաբերեն ու կոպտերեն գրությունների անգլերեն թարգմանությունը[23]։ Այդ 20 նկարներից 8-ը պատկանում են Հովհաննեսին, 5-ը՝ Իբրահիմին, 3-ը կրում են երկուսի անունները, իսկ 4-ը՝ անստորագիր են։

Մարկոս Սիմայկա փաշան կոպտական թանգարանի ֆրանսերեն կատալոգում (ավելի նվազ չափով արաբերեն հատորում) թեպետև ավելի երկար է կանգ առնում և տալիս հիշյալ եկեղեցիներում և մյուս վայրերում գտնվող սրբանկարների ցուցակները, նշելով հեղինակների անունները. սակայն շատ անգամ էլ լռելյայն է անցնում հեղինակների վրայից։ Պետք է ասել, սակայն, որ հատկապես ֆրանսերեն կատալոգում կան Հովհաննեսի նկարների բազմաթիվ ֆոտոպատճենները։

Օ. Ավետիսյանն «Անի» ամսագրում տպած իր ուսումնասիրության մեջ[24] և հետագայում լույս ընծայած իր «Հայ նկարիչներ և քանդակագործներ» վերնագրով ֆրանսերեն գրքում[25] Հովհաննեսի գործերի թիվը հասցնում է 120-ի, հոդվածում տալով երեք, իսկ գրքում՝ չորս (որից մեկը գունավոր) սրբանկարների մեծադիր գեղեցիկ լուսանկարները։ Արվեստագետն «Անի»-ում տրված երեք նկարների տակ տալիս է նաև դրանց հիշատակարանների մանրամասն հայերեն թարգմանությունը։

Մենք Հովհաննեսի գործերի թիվն այժմ հասցնում ենք 324-ի, որի ամբողջական ցուցակը[26]՝ ընդգրկելով նկարների անունը կամ սյուժեն, հաճախ նաև հեղինակի ստորագրությունն ու թվա-

23 Նկարների ցուցակը տե՛ս հիշյալ գրքում, էջ 63։

24 Տե՛ս «Անի», Բեյրութ, 1948, նոյեմբեր, էջ 34։

25 Տե՛ս հիշյալ գիրքը, էջ 120։

26 Անշուշտ, առայժմ մեկ ծանոթ նկարների մասին է խոսքը։

կանը, պատրաստի ունենք ձեռքի տակ։ Ինչպես երևում է վերևում տրված ամփոփ ցուցակից, 105 կտոր կրում են Հովհաննեսի ստորագրությունը, իսկ 32 կտոր՝ նույնի և իր ղպտի ընկերոջ անունները։ Սրանցից բացի երեք նկարներ, նկատի ունենալով նրանց թվականը, ոճը կամ նրանց վրա կոպտերեն գրված անունները, կարելի է ենթադրաբար համարել երկուսի միացյալ աշխատանքի արդյունքը, իսկ մնացած անստորագիր նկարների մեծ մասը (184 մեծ ու փոքր գործերը) կարծում ենք, որ պատկանում են Հովհաննեսին։

Ի դեպ պետք է նշել, որ Հովհաննեսի նկարած գործերի վրա գրեթե միշտ արաբերեն տառերով ու թվերով է գրված սրբանկարի հիշատակարանը և միայն շատ քիչ անգամ կոպտերեն արձանագրություն կա նրանց վրա (այն էլ հաճախ սրբի անունը միայն)։ Իսկ Իբրահիմի կամ երկուսի միացյալ նկարած գործերի վրա գրեթե միշտ արաբերենի կողքին կոպտերեն կա գրված, թվականն արաբերենի հետ միշտ էլ կրկնվում է կոպտերենով։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ ըստ երևույթին Հովհաննեսը կոպտերեն չի իմացել։

Ինչ վերաբերում է Հովհաննեսին վերագրվող 184 անստորագիր[27] գործերին, մենք էլ առանց վերապահության համաձայն ենք Օ. Ավետիսյանի հետ, որ գրում է. «...կարելի է ասել թե նույն այս եկեղեցիներուն մեջ կան տակավին բազմաթիվ նկարներ, որոնք, թեև անստորագիր, բայց դատելով անոնց ոճեն, հնության աստիճանեն, գործածված նյութեղենեն, ոմանց կրած թվականներեն և այլ հատկություններեն, կրնան վստահորեն վերագրվիլ Յուհաննայինը»[28]։

Վերոհիշյալներից բացի, Հովհաննեսի նկարներն այլ նկարիչների գործերից զանազանելու համար հարկավոր է նկատի առնել նաև սրբապատկերների շրջանակները։ Հովհաննեսինը բոլորովին տարբեր են մյուս նկարիչների շրջանակներից։

Պետք է ասել, որ վերոհիշյալ կոպտական եկեղեցիներում և վանքերում Հովհաննեսի ու Իբրահիմի XVIII դարի սրբանկարներից բացի կան նաև ավելի ուշ և վաղ[29] շրջանների ղպտի և օտարազգի այլ նկարիչների ուրիշ բազմաթիվ նկարներ։

Հովհաննես նկարչի մասին մի վերջին հանգամանք ևս։ Պարզվում է, որ նա սրբանկարներ է նկարել ոչ միայն ղպտի վանքերի և եկեղեցիների համար, այլև ղպտի առանձին անձնավորությունների հատուկ պատվերով, նրանց տան համար։ Այժմ, օրինակ, հին Կահիրեի ս. Կույսին նվիրված էլ-Մոալլաքայի եկեղեցում գտնվող «Սրբուհի Դամիանոսն ու 40 կույսերը» ներկայացնող երկու նկարները (առաջինը № 51, 1776 թ. և 92×90 սմ չափերով, իսկ երկրորդը № 52, անթվական և 43×61 սմ չափսերով) ունեն հետևյալ արաբերեն հիշատակարանը. «Գործ Հաննա հայազգու, հանգուցյալ վարպետ Միխայիլ Ֆայդաուիի որդի վարպետ Գրիգիսի տան համար»[30]։

Մեզ ծանոթ սրբապատկերների մեծ մասը, սակայն, նկարված է, անկասկած, հոգևոր հիմնարկների համար։ Այն նկարների հիշատակարաններում, որոնք պատվիրված են եղել ուղղակի եկեղեցիների կամ վանքերի կողմից, երբեմն գրված է և երբեմն էլ չի գրված այս մասին, սակայն անհատների կողմից պատվիրված նկարների հիշատակարանում անպայման նշված են պատվիրատուի և երբեմն էլ նրա ընտանիքի անդամների անունները։ Կասրիյատ էլ-Ռիհանի ս. Կույսի եկեղեցում գտնվող «Հրաշագործ ս. Մինաս» նկարը պատվիրված է «ավագ քահանա հանգուցյալ Սուլեյման Աբու Տակիյայի որդի վարպետ Անտունիի» կողմից[31], իսկ էլ-Մոալլաքայի ս. Կույսի եկեղեցում գտնվող «Ս. Ոնոփրիոս ճգնավոր» նկարը պատվիրված է «վարպետ Էբեյիդի, իր կնոջ և իր Մարիամ աղջկա» կողմից[32]։

Հովհաննեսը համեստորեն միշտ իր անվան կողքին գրել է الحقير (խոնարհ) բառը, մի բան, որ շատ է հիշեցնում «անարժան, փծուն, եղկելի, աղքատ, մեղապարտ...» և միևնույն ժամանակ աշխատասեր մեր գրիչներին։ Բայց դա չի խանգարել, որ նրա կատարածը բարձր գնահատեն հետագայում օտար և հայ մասնագետները։

---

27 Սույն 184 գործերի մի մասը ստորագրություն և թվական չի ունեցել ժամանակին, իսկ մնացածներինը կամ ժամանակի ընթացքում սրբվել և անընթեռնելի են դարձել և կամ շրջանակի ու ծեփի տակն են մնացել, որի պատճառով մենք չկարողացանք սեփական աչքով տեսնել և նոթագրել։ Հատկապես հեղինակի անունն ու թվականը գրեթե միշտ գրված են եղել հիշատակարանի վերջում, դրա համար մնացել են ծեփի կամ շրջանակի տակ։

28 Տե՛ս «Անի», 1948, նոյեմբեր, էջ 36։

29 XV—XVII դարերից, մինչև իսկ XII դարից (տե՛ս Կոպտական թանգարանի 1937 թ. ֆրանսերեն կատալոգը, էջ 46, № 3370 նկարը)։

30 Նույն տեղում, էջ 60։

31 Մուլոքի և Լանգդոնի նշված անգլերեն աշխատությունը, էջ 52։

32 Նույն տեղում, էջ 60։

Սիմայկա փաշան, խոսելով Կոպտական թանգարան տեղափոխված սրբանկարների մասին, գրում է, որ «ամենագեղեցիկները տակավին գտնվում են տեղում, հին Կահիրեի Արուլ-Սեյֆեյն Եկեղեցում, որտեղ այցելուն գտնելու է լավագույն նմուշները»։ Ակնարկությունն անշուշտ Հովհաննեսի նկարների մասին է։ Այս եկեղեցում նա ունի միայն 98 կտոր, որից 21-ը ղպտի Իրրահիմի հետ է նկարել։ Ապա շարունակելով, Սիմայկա փաշան գրում է. «Այս եկեղեցին ունի սրբապատկերների ամենահարուստ և ամենակարևոր հավաքածուն»[33]։

Մուլոքի և Լանգդոնի կարծիքով ղպտի և հայ նկարիչների միացյալ նկարած գործերի մեջ «վարպետի ձեռքը» (masterhand) պատկանում է Հովհաննեսին[34]։

Կահիրեաբնակ արվեստաբան Է. Լուկիանոֆը, կրկնելով հանդերձ նախորդների այն կարծիքը, թե Հովհաննեսը հունական դպրոցի հետևող է, իր մի հոդվածում շատ բարձր է գնահատում նրան[35]։

Ահա թե ինչ է գրում Օ. Ավետիսյանը.

«Լավագույն սրբապատկերները (խոսքը կոպտական եկեղեցիների մասին է—Ն. Ս.) միշտ մի օտարականի են պատկանում, կամ հույնի և կամ շատ հաճախ մի հայի։ Մասնավորապես Հովհաննես հայազգին, որ ընդօրինակեց հունական սրբապատկերները, հեղինակն է լավագույն նկարներից շատերի, որոնց թվականն է XVIII դարի կեսերը, և որոնք մաս են կազմում գրեթե բոլոր եկեղեցիների (ղպտի—Ն. Մ.) հավաքածուների. իսկ Արուլ Սեյֆեյնինն ամենահարուստն է (էջ 24)։ ...XVIII դարի երկրորդ կեսին Կահիրեում ապրում էր մի սրբանկարիչ, որ կոչվում էր Հովհաննես հայազգի։ Նա հունական դպրոցի (?—Ն. Մ.) աշակերտ էր և ընդօրինակում էր իր հեղինակությունները, կատարելով ղպտիների բազմաթիվ պատվերները այն ժամանակ վերանորոգվող նրանց եկեղեցիների համար, որտեղ այդ նկարները պահված են մեծ հարգանքով։ Եվ իրավացիորեն, որովհետև Հովհաննես հայազգու գործը զանազանվում է աչքի մի ակնարկով ղպտի կրոնական նկարչության աստիճանից»[36]։

Արարագետ Հակոբ Նալբանդյանն էլ Հովհաննեսի մասին գրում է.

«Եգիպտոսի հայ գաղութին արվեստի պատմության համար տեղին է, որ այս առիթով անգամ մը ևս հիշվին, ժամանակակից տաղանդավոր հայ նկարիչներու պատվո շարքին, իրենց նախորդները, XII դարուն ապրող Թեոդորոսն և XVIII դարուն ապրող Իրրահիմ (?—Ն. Մ.) Յուհաննան որուն ինքնատիպ նկարները արդիական արժեք մը կստանան հանկարծ։ Այս առթիվ դարձյալ հարգանքի պարտականություն մը ունինք Իրրահիմ (?—Ն. Ս.) Յուհաննայի հանդեպ, որ ապրելով օտար հողի վրա և աշխատելով օտարներու համար, պատվո տիտղոս մը նկատած է իր հայությունը և իր նկարներուն ներքև իր ստորագրության կցած է միշտ ազգանունը (այսինքն ազգությունը—Ն. Մ.)՝ «էլ Արմանի»[37]։

* *
*

Հայ ժողովուրդը XVIII դարում իր հայրենիքում հեծում էր թուրքական և պարսկական բռնակալությունների դաժան լծի տակ։ Հայաստանից հեռացող բազմաթիվ հայեր հայկական գաղթաշխներում ապրող իրենց հայրենակիցների հետ եղան արհեստների և արվեստների տարածողներ։

Այս վերջիններից մեկն էլ Երուսաղեմացի Հովհաննես նկարիչն էր, որ XVIII դարի երկրորդ կեսում Եգիպտոսի կոպտական բազմաթիվ աղոթավայրերում գեղեցիկ կերպով ցույց տվեց արվեստագետի իր բազմաշնորհ հատկությունները։

Նաղաշ, Հակոբ և Հովնաթան Հովնաթանյանների հետ, Հովհաննես Երուսաղեմացին իր հարուստ վաստակով գալիս է հարստացնելու և փայլ տալու միջնադարյան մեր արվեստի պատմությանը։

---

[33] Guide sommaire du Musée Copte, le Caire, 1937, էջ 45, 80։

[34] Մուլոք և Լանգդոն, նշվ. աշխ., էջ 12։

[35] „Les Cahiers Coptes", № 3, publiés par l'Institut Copte du Caire.

[36] Օնիկ Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 120։

[37] Տե՛ս «Արաքս», շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1946, 2 նոյեմբերի, «Նկարիչի մը մասին յուսարանություն» հոդվածը։